

առնելով՝ որից յետոյ դրուած է վերից վար Մարաց և Հայոց թագաւորների ցանկը՝

Վարրակիս.	Պարոյր (որդի Սկայորդւոյ).
Մօդակիս.	Հրաչեայ.
Լուտիկիս.	Փառնուաս.
Դէովկիս.	Պաճոյճ.
Փռաւորտիս.	Կոռնակ
Կուաքս.	Փաւսս
Լժդահակ.	Միւս Հայկակ.

Եւ յս ցանկից և գլխի վերնագրից երևում էր, որ Հրաչեան Պարոյրի որդին էր, Փառնուասը՝ Հրաչեայի որդին, Պաճոյճը Կոռնակի, և այլն ըստ կարգին, Բաւական էր որ գրչի գլխում ծագէր այս շատ բնական հարցը. իսկ Պարոյրն ո՞ւմ որդին էր, եւ մենք կուենայինք, ինչպէս և ունեցել ենք՝ պատասխանը. «Որդի Սկայորդւոյ», Իսկ թէ ինչո՞ւ անպատճառ «Սկայորդւոյ» և ոչ մի ուրիշի, այդ էլ շատ պարզ է, որովհետեւ Սկայորդին է նախընթաց հայ նահապետների ցանկի վերջինը, այն է՝ Պարոյրին ամենից մօտիկը:

Խորենացու թարգմանիչները, առանց բացառութեան, ոչ միայն Պարոյրին համարում են Սկայորդու որդի, որ այդպէս էլ պէտք է լինէր, այլ նաև, այդ հասկացողութեամբ առաջնորդուած, Ե. գիրք, 21 գլխի վերնագրի «Որ ի Սկայորդւոյն Պարոյր» ասացուածը թարգմանում են առանց տատամսութեան. «Սկայորդու որդի Պարոյր», որով աւելացնում են մի նոր կեղակարծ փաստ յօդուած ընդմիջարկութիւնից ծագած սխալի:

ՄԻՆԱԲԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Զէլանդիայի եպիսկոպոս Մարտենսէնը յայտնի է իւր աստուածաբանական և բարոյագիտական գրուածքներով բոլոր լուսաւոր աշխարհին: Նորա գրուածքները բազմիցս տպագրուած են ու այլ և այլ լեզուներով թարգմանուած, և որովհետեւ ներկայումս առանձին ձգտումն է նկատուում թէ գիտութեան և թէ հասարակութեան մէջ դէպի բարոյական խնդիրներն ու հետազօտութիւնք, ուստի և հարկ համարեցինք նորա

գրուածքների երրորդ հատորից որ «Ընկերական - հասարակական բարոյագիտութիւն» է կոչուում, համառօտութեամբ թարգմանել մի մասն, ուր հեղինակը խօսում է գերդաստանի, պետութեան, եկեղեցւոյ և Աստուծոյ արքայութեան հաստատութեան մասին, քննութեան առնելով կրօնական և քաղաքական հասարակական կեանքին վերաբերուող կենդանի խնդիրները: Մարտենսէնի ընկերական - հասարակական բարոյագիտութեան հրատարակութիւնը մանաւանդ աւելի յարմար և նշանաւոր է ներկայիս համար, երբ հասարակաց կարծիքը զրգռուած է և վրդոված մոլոր վարդապետութիւններով և պահանջում է ղեկավարութիւն և բաւարարութիւն: Եւ որովհետեւ հայ հասարակութիւնք էլ ազատ չեն այդ մոլորութիւններից ի շնորհս թէ օտար և թէ ընտանի գործիչների, որոնք կուրօրէն առանց ընտրող — հասունութեան ամեն գաղափարի քարոզիչ են դուրս գալիս, ի վնաս աղբի թէ բարոյական - կրօնական, թէ ընտանեկան և թէ հասարակական զգացմանց ու պարտականութեանց, ուստի և հարկ համարեցինք հայ ընթերցողներին էլ Արարատի միջոցով հաղորդելու Մարտենսէնի գրուածոց մի մասը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵԱՆՔՆ

ԵՒ

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ.

Հասարակութեան բարոյական կեանքը զարգանում է ընտանիքում և պետութիւնում, գիտութեան և արհեստի մէջ իբրեւ այնպիսի շրջաններում, որոնք նպաստում են կրթութեան զարգացման և վերջապէս եկեղեցւում, որոյ կենդրոնն է սրբոց ժողովը: Այս հասարակական առանձին կազմուածքները մասամբ իբրեւ բարիք համարելի են, ուրեմն իբրեւ իրազործուած նպատակներ, որոնց մէջ մարդս գտնում է իւր բաւարարութիւնը, զուարճութիւնը, ուրախութիւնն և մասամբ իբրեւ բարոյական անհատներ համարելի են, որոց իւրաքանչիւրը պարտական է կատարելու իւր առանձին կոչումն: Իսկ «է»-ը, այս փոքրիկ անհատը, անձնապէս պէտք է լինի վերոյիշեալ հասարակական շրջանների անդամ, պէտք է իրան սեպհականէ նոցա ազդեցութիւնն և միեւնոյն ժամանակ նպաստէ այդ ազդեցութեան, համբերէ և զոհեր անէ, միշտ աչքի

առաջ ունենալով թէ ամբողջի և թէ իւր անձնական կատարելութիւնը:

Վերոյիշեալ բարոյական հասարակական շրջաններից իւրաքանչիւրում երևում է մարդուս նշանակութեան էական կողմը, և նոցանից իւրաքանչիւրում քրիստոնէութիւնը ճգնում է զարգացնելու «նոր մարդուն»: Ինչ չափով որ այստեղ իրագործուում է մարդկութեան քրիստոնէական Գաղատիոյ, նոյնչափով և երկրումս Աստուծոյ արքայութիւնը ստանում է հասարակական, ընդհմին և անհատական կերպարան: Բայց այստեղ՝ երկրիս երեսին Աստուծոյ արքայութիւնը չէ հասնում և չէ կարող հասնել իւր կատարելութեան: Վերոյիշեալ ձևերը նշանակած են միայն երկրաւոր և ժամանակաւոր գոյութեան համար — բայց և այնպէս դա չէ արգելում, որ այդ անցուորական եղանակներով և սոցա միջնորդութեամբ մշակուէր և յայտնագործուէր նոյն ինքն Աստուծոյ յաւիտենական արքայութիւնը: Աստուծոյ արքայութեան կատարելութեան վերաբերմամբ նոքա նկատելի պիտի լինին իբրեւ պատրաստական գործ, որ կդադարի երբ կերեւի յաւիտենական կատարելութիւնը. նոքա պէտք է նկատուեն իբրեւ ժամանակաւոր մարմնացումն Աստուծոյ արքայութեան, իբրեւ ստուերներ, որոնք պիտի յայտնուին փառաց երկնաւոր արքայութիւնում: Թէև նոքա, ինչպէս և բոլոր երկրաւոր կեանքս, ունին իրանց որոշ յարաբերական արժանաւորութիւնքն, բայց ըստ խորին նշանակութեանց իւրեանց նոքա են միայն եւեթ պատրաստական և կրթական ձևեր: Մեր կենցաղավարութեամբ այս աշխարհումս պէտք է դաստիարակուենք սիրոյ և արդարութեան, ազատութեան և երջանկութեան կատարեալ արքայութեան համար, որոյ մէջ եւ աստուածայինն, եւ մարդկայինն եւ հասարակութիւն եւ առանձին անհատն, ինչպէս եւ շնորհաց ու զօրութեանց բազմազանութիւնն կերեւեն այն ներքաշման լիակամբ, որ մեզ այժմ անհասանելի է և որ բոլորովին այլ կատարեալ համաշխարհային տնտեսութեան և կարգի է կարօտ, քան որպիսին ներկայինս է:

ԳԵՐԴԱՍՏԱՆ

ԳԵՐԴԱՍՏԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ.

Գերդաստանն, որոյ Հիմքը դրուում է ամուսնութեամբ, թէ բնութեան և թէ ազատութեան գործ է, որ պահպանուում է թէ բնական և թէ բարոյական կապերով. գերդաստանն, ասում ենք, կազմում է մարդկութեան մէջ սկիզբն ու Հիմն բարոյական աշխարհի: Ընտանիքում այս աշխարհս անընդհատաբար նորոգուում է և կարծես վերածնում է: Մի քանի փիլիսոփայք, որպիսիք են զորօրինակ Ռուսօ, Կանտն ու Ֆիխտեն ճգնում են վարդապետութիւնը հասարակութեան կազմութեան մասին Հիմնել նորա վերայ, որ դորա համար Հիմնաքար ընդունում են առանձին անհատ անձնաւորութիւնն, որ կատարեալ հասակումն է կամ որ ունի բանականութիւն: Այս փիլիսոփաները զանազան հասարակական շրջանների ծագումն բացատրում են դաշինքով, որ զանազան միմեանցից անկախ անհատական (Հիւլէական) անձնաւորութիւնք կապում են իրար մէջ: Այս հայեցակէտի վերայ նոքա կանգնեցին այնպիսի բարոյագիտութիւն և իրաւանց տեսութիւն, որ իւր բոլոր արժանաւորութեամբք հանդերձ անբնական է: Որովհետեւ ոչ թէ անհատն, այլ գերդաստանն է այն միաւորն, որով պէտք է սկսենք հասարակական կենցաղավարութեան գիտութիւնն, եթէ չենք կամենում սխալի մէջ ընկնել: Աւերոյիշեալ իմաստասէրները բոլորովին մոռանում են, որ ծնունդն ու դաստիարակութիւնը, սերունդն ու աւանդութիւնն անհրաժեշտ պայմաններն են, որպէս զի անհատն աշխարհումս մարմնաւոր և հոգեւոր կեանք ստանայ: Ոչ մի երեխայ աշխարհ չէ գալիս առանց նախորդների, այլ ընդհակառակն իւրաքանչիւր երեխայի նախորդներն են հայրն ու մայրը, նա ծնուում է արու կամ էգ, իբրեւ անդամ սերնդոց, որպէս զի դաստիարակութեամբ անկատար հասակից հասնի կատարելութեան հասակն: Եւ թէ ամուսնութիւնն ու գերդաստանը կազմում են մարդկային սեռի սկիզբն—այդ երեւում է և աստուածային յայտնութիւնից, որ մարդկային սեռը առաջ է բերում մի զոյգից. յայտնի բան է այդ զոյգը ստեղծուեցաւ բառիս բուն նշանակութեամբ, իսկ նորա բոլոր յաջորդներն—

ըը առաջ են գալիս ծննդեամբ: Ընդ սմին հարկ է ընդունել և ճանաչել, որ պէտք է գոյութիւն ունենայ աւանդութեան հոգեւոր կապն, որ միաւորում է միմեանց հետ ծնողաց և զաւակաց, որոնք անընդհատաբար միմեանց փոխարինում են:

Եւ որովհետեւ գերդաստանն է մարդկութեան մէջ բարոյական աշխարհի սկիզբն ու հիմն, ուստի և նորա սահմանների մէջ արտափալում են բարոյական աշխարհի ընդհանուր հիմնական ձեւն և կարգը, թէև այս ձեւը հասարակական կեանքի զանազան աստիճաններում շատ այլ և այլ անհատական կերպարանքներ է ստանում: Այն հիմնական ձեւն, որ աւելի պիտի մշակուի ու կատարելագործուի, է էական հաւասարութիւնը զանազան անձնաւորութեանց, որոնք ըստ պատկերի Աստուծոյ են ստեղծուած. բայց այս հաւասարութիւնն էլ անհաւասարութեանց դրութեան մէջ է (смертею): Ոչ միայն առն ու կնոջ տարբերութեան մէջ, ոչ միայն նոցա մարմնաւոր, այլ և հոգեւոր տարբերութեանց մէջ, որ պայմանաւորուած է մարդուս ամբողջ կազմուածքով, — ոչ միայն այս տարբերութեան մէջ է, ասում ենք, երևում անհաւասարութիւնն, իբրև հասարակական բնական օրէնք. Ո՛չ, այլ ընդհանրապէս ամեն կողմանէ — ծնողաց և զաւակաց մէջ, եղբարց ու քոյրերի, աւագների և կրտսերների, տէրերի ու ծառաների մէջ եղած յարաբերութեանց միջոցով գերդաստանը չէ ներկայացնում մեզ միակերպ հաւասարութիւն, այլ ներկայացնում է յարաբերութիւն տիրապետութեան և հպատակութեան, հակապատկերները հեղինակութեան և հնազանդութեան, հեղինակութեան և յարգանաց, գերդաստանը ներկայացնում է մեզ տարբերութիւնք անդամների մէջ և այս տարբերութիւնք չպէտք է ստորացնուին, այլ պէտք է մեղմանան սիրով, մարդասիրութեան բարձրագոյն զարգացմամբ, պէտք է լուսաւորուեն և հասնեն մինչև կրօնական-բարոյական հաւասարութեան աստիճանը:

Ըստ որում գերդաստանն է մեզ տալիս նկատելի կերպով հասարակական հիմնական ձեւը բարոյական աշխարհի համար, մարդոց փոխադարձ յարաբերութեանց վերաբերմամբ. ուստի և նա էլ ցոյց է տալիս մեզ հիմնական ձեւն այն յարաբերութեան, որոյ մէջ

պէտք է դտանուի բարոյական աշխարհը առ բնութիւնն, այս ձեւն երեւում է մեզ գերդաստանի մէջ հէնց այն պատճառով, որ նրանում պատկերանում են մեր զննութեան տնտեսական կեանքի երկու տարրները՝ — այն է սեպհականութիւնն ու աշխատանքը։ Որովհետեւ գերդաստանը չէ կարող ծագել չէ կարող պահպանուել առանց սեպհականութեան, առանց փիղիքական նիւթի, առանց որոշ քանակութեան երկրաւոր առարկաների, որոնք պիտի ենթարկուեն մարդուս ազատ կամքին և որոնք պահանջուում են բուն-մարդկային գոյութեան համար, աւելորդ է ի հարկէ խօսելն անգամ նորա վերայ, ինչ որ անպայման անհրաժեշտ է կեանքի պահպանութեան համար, կամ այն ամենի մասին, որ կարեւոր է բաւականութեան համար։ Իսկ սեպհականութիւն և կայք պէտք է ձեռք բերուին և ընդ նմին ձեռք բերուին աշխատանքով։ արդէն երկրիս վերայ առաջին զոյգին տրուեցաւ հետեւեալ պատուէրը. «քրտամբ երեսաց կերիցես զհաց քո»։ Իսկ այս պատուիրանի մէջ բովանդակուում է և հետեւեալը, «քո երեսիդ քրտինքով դու պիտի պահես եւ քո ընտանիքը»։ Սեպհականութեան հիմն չէ կարելի անհատականաբար սկսուած համարել, այսինքն անհատից առաջացած, այլ նա՝ սեպհականութիւնը պէտք է հիմնուած լինի հասարակութեան բարոյական և իրաւական կեանքի գաղափարի վերայ։ Աւերջինիս համար սեպհականութիւնն, լինի սա մասնաւոր կամ հասարակական, անհրաժեշտ պայման է։ Սեպհականութեան տրուած նշանակութիւնն միշտ համապատասխան կլինի այն նշանակութեան, որ տրուում է նոյն իսկ անձնաւորութեան և առհասարակ անհատականութեանց թագաւորութեան ներկայ երկրաւոր յարաբերութեանց մէջ։ Սեպհականութիւնն իւր կատարեալ զարգացման, յայտնի բան է, կարող է հասնել պետութեան մէջ։ Որովհետեւ ո՞վ պիտի ապահովէ ինձ իմ սեպհականութիւնս։ Ո՞վ կարող է վճռել վէճերը իմ և +...ի մասին, եթէ ոչ պետութիւնը։ Բայց իսկապէս սեպհականութիւնն արդէն տրուած է գերդաստանին, որովհետեւ անստուացուած գերդաստանք բացառութիւն են և անբնական երեւոյթ։ Եւ արդէն գերդաստանի մէջ երեւում է, որ սեպհականութիւնը չունի իսկապէս միայն անհատական նշանակութիւն (գեր-

դաստանի որոշեալ անդամի կամ տան համար), այլ և ընկերական (ամբողջ տան համար), որքան որ կարող է խօսք լինել գերդաստանական սեպհականութեան մասին և քանի որ հայրական կալուածքն իբրև ժառանգութիւն անցնում է զաւակաց: Առանց ժառանգութեան իրաւանց չէր կարող բաւական առիթ լինել աշխատելու ընտանիքի բարօրութեան և ապագայի համար, այդպիսի դէպքում մարդիկ կաշխատէին միայն ընդհանուր համար. որ զաւակունք ունին նշանակութիւն և կշիռ իբրև իրանց ծնողաց ժառանգներ — այս գաղափարը երևում է բոլոր Ա. Գրքի մէջ (Մենդ. ԺԲ. 3. Դուկ, ԺԵ. 12. Գաղ. Դ. 1.):

Միայն քրիստոնէութեամբ, և այն սորա տուած ազատութեամբ և այն փրկութեամբ, որ Քրիստոս բերեց աշխարհիս — գերդաստանը հասաւ իւր իսկական բարոյական նշանակութեան: Հին հեթանոսական աշխարհում, ուր մարդուս բարձրագոյն նպատակը քաղաքական կեանքի մէջն էր կայանում, ուր ուրեմն աչքի առաջ ունէին միայն մարդուս արտաքին երկրաւոր նշանակութիւնը, գերդաստանը կազմում էր միայն աղբիւր և դուռն քաղաքական կեանքի համար: (Սոյնպիսի գաղափար յայտնած է Պլատոնի գրքում յաղագս պետութեան): Ընդհակառակն քրիստոնէութիւնն, որ ոչ միայն այր մարդուն, այլ և կնոջ ընդունում է և ճանաչում անմահ մարդ իւր համաշխարհական նշանակութեամբ, քրիստոնէութիւնն, որ զանազանում է ներքին և արտաքին մարդուն և երջանիկ անձանց թագաւորութեան վերայ նայում է իբրև հասարակական կեանքի վերջնական նպատակի վերայ — նա տուեց գերդաստանին ինքնագոյ, պետութիւնից անկախ, նշանակութիւն, և ցոյց տուեց նորա ներքին կողմն, որով գերդաստանը ներկայացնում է իբրև Աստուծոյ արքայութեան յայտնութեան ձևն երկրիս երեսին, իբրև տորրանոց-տնկարան ոչ միայն պետութեան, այլ և Քրիստոսի եկեղեցու համար: Մարդկային առաջին և արմատական զգացմանց՝ մանկական ակնածութեան և յարգանաց, վստահութեան և անձնութեան, սիրոյ և հաւատարմութեան միջոցով վաղ ուրեմն պէտք է զարգանան հոգւոյ մէջ համապատասխան կրօնական-բարոյական տարրներն, քրիստոնէական հաւատն ու քրիստոնէական

սէրը, կեանք ընտանութեամբ Տիրոջ Հետ, կամաւոր Հնազանդութեամբ Նորա սուրբ օրէնքին և Աւետարանին: Ինչպէս որ կայ փոխադարձ յարաբերութիւն գերդաստանի և Հասարակական կենցաղավարութեան միւս շրջանների մէջ, նոյնը կարելի է ասել առանձին մտքով և յարաբերութեան մասին գերդաստանի և եկեղեցւոյ մէջ: Միայն այն ժամանակ գերդաստանը կարող է կատարել իւր նշանակութիւնն, երբ նա զգում է և ճանաչում իրան ոչ միայն պետութեան, այլ և Քրիստոսի եկեղեցւոյ անդամ: Միւս կողմից և եկեղեցին, որոյ պարտքն է տարածել բոլոր ազգերի մէջ քրիստոնէական սկզբունքներ, կարող է տարածուիլ պաշտօնութիւն և Հաստատուիլ ժողովրդի մէջ այն չափով, որչափ որ նա օգնում է Աւետարանին արմատներ արձակելու գերդաստանի մէջ և այն մարդկային զգացմանց մէջ, որոնք ամեն զգացմունքներից առաջինն՝ սոմենարմատականներն ու բնականներն են: Եկեղեցին գերդաստանների վերայ ամրացած է: Պատմութիւնն էլ վկայում է, որ այն ժամանակներում, երբ կրօնական կեանքը թուլանում էր և Հասարակական կեանքում գրեթէ մարում, Հանգչում, ապագայի Համար, սրբազան կրակը պաշտօնութեանում էր անդորր և խաղաղ ընտանեկան շրջաններում—այնտեղ ուր քրիստոնէայ մայրը կանգնում է իւր Համար յաւիտենական, թէև աշխարհին անյայտ, յիշատակարաններ:

Իւր այս ներքին կապով գերդաստանի Հետ քրիստոնէութիւնն ապացուցանում է իւր միութիւնն այն բանի Հետ, ինչ որ սկզբնաբար մարդկային է, այն բանի Հետ, ինչ որ ի սկզբանէ եղել է: Գերդաստանն ու եկեղեցին իրանց խորագոյն Հիմամբ պաշտպանող և պաշտպանող են կենսական տարրների բարոյական աշխարհում: Միայն նոցա միջնորդութեամբ կարող են մարդկային հոգիների խորքում ծագել և Հաստատուել Հեղինակութիւնն ու յարգանքը, անձնուէր սէրն և Հաւատարմութիւնն—բարոյական աշխարհի այս գլխաւոր սիւներն: Պատերազմը Հայրենեաց Համար ի Հնուց Հետէ Համարում է պատերազմ սրբութեան խորանի և օճախի (ընտանեաց) Համար (pro aris et focus): Ազգային կեանքի իւրաքանչիւր վերանորոգումն, իւրաքանչիւր Հիմնական բարեփոփութիւն գլխա-

ւորապէս պէտք է ծագեն. աղբերանան այս երկու շրջաններից:
 Նոցա մէջ էլ պէտք է որոնել բժշկութիւնն այն բարոյական ախ-
 տերի, որոնք թափանցում են ազգային կեանքի մէջ, եթէ չենք
 կամենում, որ ազգի ընդհանուր վիճակն դառնայ անուղղելի: Ամե-
 նայն վերանորոգումն թէ ամբողջ Հասարակութեան և թէ առան-
 ձին անհատների, հիմնուում է նորա վերադարձի վերայ դէպի
 սկզբնական հիմնական տարրները, դէպի այն որ գոյութիւն ունէր
 բոլոր մարդկային գիւտերից և արհեստներից առաջ: Եւ եկեղեցին
 է, որ մեզ բերում է Աւետարան, որ մեզ ամեն անաստուածայի-
 նից, ամենից, որ ինչ միայն աստուածայինի արտաքին կերպարանք
 է կրում, դարձնում է դէպի սկզբնականը, դէպի իսկապէս աստ-
 ուածայինը — առ մի ճշմարիտ Աստուածը և առ Նա, որին Նա
 ուղարկեց, առ բնակարանն Երկնաւոր Հօր, որ մենք թողինք, որ-
 պէս զի մոլորուենք մեր սեպհական ճանապարհներում, դառնալով
 դէպի մեր սեպհական կարծիքներն ու մտածմունքներն Աստուծոյ և
 աստուածային առարկաների մասին, յամառելով մեր յիմար իմաս-
 տութեան մէջ, մեր կեղծ և երազական քաղաքականութեամբ, մեր
 սնոտի աստուածացումամբ արհեստի և մեր յափշտակութեամբ
 ներկայ քաղաքակրթութեան վերայ, Աւետարանն ազատում է մեզ
 այս ամենից և դարձնում է մեզ դէպի այն յաւիտենական արքայու-
 թիւնն, որ է մեր Հայրենիքն — որպէս զի մենք ճանաչենք և խոստո-
 վանենք թէ ներկայումս որպիսի է մեր յարաբերութիւնն առ Աստ-
 ուած և որպիսի նա պէտք է լինի: Սոյնպէս և գերդաստանը դարձ-
 նում է մեզ դէպի սկզբնական տարրները՝ դէպի Հայրական և մայ-
 րական սկզբունքներն, դէպի սէր, յարգանք, վստահութիւն և Հա-
 ւատարմութիւն, որպէս զի և այստեղ մենք մեզ գտնել կարողա-
 նանք, գտնելով պատշաճաւոր մարդկային հիմն մեր կեանքի Հա-
 մար: Գերդաստանի այս նախնական տարրներից քանիցս կազմա-
 կերպուել է մարդկային Հասարակութիւն (այստեղ Հասկացուում է
 մարդկային սեռի տարածուիլը ջրհեղեղից յետոյ): Եւ ապառքայում
 մենք կտեսնենք Հետեւեալ մտքի Հաստատութիւնը. «դիցուք ան-
 դամ, որ պետութիւնն ու քաղաքական Հասարակութիւնը խախտ-
 ման վիճակի մէջ են, որ Հասարակական բարոյականութիւնը շատ

խանգարուած է. բայց քանի եկեղեցին քարոզում է Ս. Աւետարանն և ժողովրդի ականջները դեռ բաց են սորա համար և քանի որ ընտանեկան կեանքն ընդհանրապէս պահպանում է իւր մաքրութիւնն, դեռ էլի կայ հնարաւորութիւն անկեալ ազգութեան վերականգման համար: Ազգն անյուսալի վիճակի ենթարկուում է միայն այն ժամանակ, երբ թէ եկեղեցին և թէ ընտանիքը խախտուում են և անընդունակ են դառնում որեւէ բարեփոխութիւն անելու:

Գերդաստանի նշանակութիւնն, իբրև հայրենասիրութեան բովբի և այն, ընդհանուր հասարակական յեղափոխութեան ժամանակ, շատ յաջողութեամբ որոշել է Գէյէրը, Գէօթէի և Հոմերի համեմատութեան մէջ: Նա ասում է, որ գերդաստանը «պէս-լէսն ունիւնիւն քաղաքի» է: Գրեդաստանի այսպիսի նշանակութիւնն Գէօթէն արտայայտել է իւր «Հերման և Դորոթէա» երկասիրութեան մէջ: Այս երկասիրութեան մէջ բանաստեղծը տեղափոխում է մեզ անմիջապէս գիւղական և պարզամիտ հասարակութեան շրջանը: Այս աննման երկասիրութեան մէջ, որ լի է բարձր բարոյական ներշնչմամբ, ոչ աննշան տեղ է բռնում այն հանգամանքն, որ Հերման և Դորոթէան ամուսնութեան դաշն են կապում կարծես հրաբուխի գազաթին կանգնած — այդ այն ժամանակ էր երբ թանձր ամպերն ու կայծակի փայլերը ծածկում էին հորիզոնը, երբ հասարակական կեանքն ենթարկուում էր վտանգի և թշուառութեանց, այն է ֆրանսիական յեղափոխութեան եռման ժամանակ, սորա պատերազմների և նորա պատճառած թշուառութեանց ժամանակ, երբ պետութեան օրինական հիմունքը խախտուած էին, երբ սեպհակաշուութիւնն անապահով վիճակի մէջ էր և կարծես աշխարհը կրկին պիտի ընդունէր իւր նախկին աներևոյթ և անհաստատ վիճակը (քաոս): Բայց և այնպէս նոքա ամուսնանում են, լի յուսով և առողջ ոգով: Այստեղ երևում է կեանքի յոյսն ամենագեղեցիկ կերպարանքով: Այստեղ սէրը դէպի գերդաստանն ընդարձակուում է և դառնում հայրենեաց սէր. որ պատրաստ է ամենամեծ զոհաբերութիւնք անելու, պատերազմելու թշնամու դէմ, Աստուծոյ և օրէնքի համար, ծնօղաց, կնոջ և զաւակաց համար. նա՛ սէրը միանում է Գէյ-Գէօթէի հետ, անընկճելի քաջ որոշմամբ երթալու

Համար ընդառաջ անյայտ և վտանգաւոր ապագային և պատերազմի միջոցին լի յուսով նայում է այն խաղաղ վիճակի վերայ, որ նրան պիտի հետևի:

ՄԻԱԿԻՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ. Գերդաստանի սկիզբն ամուսնութիւնն է: Բնական սերական տարբերութեան Հայեցակտից ամուսնութիւնըն այր և կին մարդոց միաւորութիւնն է ի մի անձն: Իւրաքանչիւր անհատականութեան տրուած միակողմանիութիւնը սեռական վերաբերմամբ ամուսնութեան մէջ պէտք է անհետանայ այն պատճառով, որ ամուսնութիւնն ընդունում է իւր մէջ նորա հակադարձն. ուստի և այր մարդը միայն ամուսնութեամբ դառնում է իսկապէս ճշգրիտ մոթով այր, ինչպէս և կին մարդն իսկական կին: Միայն կնոջ (իբրև իւր միւս կիսի մէջ) այր մարդը գտնում է ինքն իրան և ընդհակառակն: Միայն այս փոխադարձ յարաբերութեանց մէջ, այս փոխադարձ պաշտպանութեան և օգնութեան մէջ, այս փոխադարձ ծառայութեանց մէջ իւրաքանչիւր մասը գտնում է իւր այրութիւնն կամ կնութիւնը, և առանց այս յարաբերութեանց չեն կարող զարգանալ ոչ այր մարդու այրական բնութեան և ոչ էլ կնոջ — իգական բնութեան թէ ֆիզիքական և թէ բարոյական ընդունակութիւնքը կատարելապէս: Եթէ ամուսնութիւնն ըմբռնենք միայն բնական կողմանէ, յայտնի բան է նա կունենայ միայն բնական ձգտման բաւարարութիւն տալու և սերունդ շարունակելու միայն նշանակութիւն: Իայց որքան էլ անհաստատ ու միակողմանի է այս հայեացքն, նոյնչափ միակողմանի համարելի է եւ հակառակ հայեացքն էլ, որ ամուսնութիւնն լոկ մի հոգեւոր յարաբերութիւն — կապ է համարում: Այնպէս անուանեալ պղատոնական սէրն այր և կին մարդոց մէջ բոլորովին այլ բնաւորութիւն ունի քան ամուսնական սէրը, որոյ առանձնայատկութիւնն հիմնուած է հէնց կրօնական — բարոյական և բնական սկզբունքների միութեան վերայ: «Եւ եղիցին երկօքին ի մարմին մի» (Մատ. ԺԹ, 5), ասում է Ս. Գիրքը: Բնական սկզբունքըն այստեղ միայն խարխիս է կազմում, բայց յայտնի բան է լոկ խարխիս (աստառ):

Ամուսնութեան իրաւաբանական որոշումն, որով նա առն և կրնոջ միաւորութիւն է, կատարեալ Համերաշխութիւնն կեանքի, և վերջապէս Հաւասարութիւնն իրաւանց կարող է ունենալ նշանակութիւն և բարոյական հայեցակետի կողմանէ, եթէ առանձին ուշադրութիւն դարձնենք կեանքի կատարեալ Համերաշխութեան (Consortium omnis vitae) վերայ, որ միայն քրիստոնէութեամբ ստանում է իւր կատարեալ բովանդակութիւնն ու նշանակութիւնը: Նոյն իսկ ամուսնութեան գաղափարի մէջ բովանդակուում է այն, որ նա պէտք է միակին լինի: Թէև միակնութիւնը քրիստոնէութիւնից առաջ էլ գոյութիւն ունէր, միայն այն ժամանակ նա սակաւ Հաստատուն էր և ապահոված: Հեթանոսութիւնն իւր բազմակնութեամբ սրբապղծութիւն էր ամուսնութեան. Իսրայէլի մէջ բազմակնութիւնը չկարողացաւ անգամ կատարելապէս Հաստատութիւն գտնել, ինչպէս տեսնում ենք նահապետների պատմութիւնից: Իսկ քրիստոնէութիւնը վերականգնեց ամուսնութեան արժանիքն, իբրև մի Աստուածային Հաստատութեան, որ ծագում է դրախտից (Մատթ. ԺԹ, 5). և մարդկային խղճի բարոյական գիտակցութեան մատնացոյց եղաւ Հաւանութեամբ միակնութեան վերայ, որովհետև քրիստոնէութիւնը յայտնեց մարդուս յաւիտենական անհատականութիւնն և մանաւանդ որ նա ազատում է կնոջ, բարձրացնում է նրան ազատ անձնաւորութեան ստիճանն և ճանաչում է նրան ժառանգակից շնորհացն կենաց (Ա. Պետր. Գ 7): Ուր տիրապետում է բազմակնութիւնն, այնտեղ գեռ ևս չէ ճանաչուում անհատի յաւիտենական նշանակութիւնն և ամուսնութիւնը մնում է պարզ սեռական կեանքի աստիճանի վերայ: Կին մարդն այնտեղ միայն զգայական բաւականութեան գործիք է կամ միջոց սերնդի շարունակութեան, իսկ ինքն ըստ ինքեան նա ոչ մի արժանաւորութիւն, կշիռ չունի: Բայց մի անհատ, որ պատկանում է գերզգայական և գերբնական աշխարհին, չպէտք է հասնի այդպիսի ստորադիր, անարժան դրութեան, այդպիսի լոկ բնական վերաբերութեան. նա երբէք չէ կարող լինել միայն միջոց սերնդի համար, ընդհակառակն նա ինքն էլ պատկանելով սերնդին, պէտք է Հաստատէ իւր բարոյական արժանիքն և այնպիսի ճանաչուի ուրիշներ-

լից էլ սերնդի մէջ: Բայց այս հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ ամուսնական յարաբերութիւնը, գոյով բնական, միեւնոյն ժամանակ կունենայ հոգեւոր—բարոյական յարաբերութեան նշանակութիւն և երբ ամուսնական կեանքն անխզելի կերպով միացած կլինի հաւատարմութեան հետ, որ սիրոյն տալիս է բարոյական բնաւորութիւն և անպայման կերպով մերժում է ամեն նոյնանման յարաբերութիւն երկրորդ անհատի հետ: Կատարեալ փոխադարձ մտերմութեան համար ամուսինների մէջ, ամուսնական կենսակցութեան հիմն պիտի լինի ազատ ընտրութիւնը:

Կնոջ հեթանոսական ստորացուցման հակապատկերը կազմում է այն չափազանց յարգանքը—պաշտումն կնոջ, անխախտելի հաւատարմութեան հետ կապուած այն երկրպագութիւնը մի կին անձնաւորութեան և այն աստուածացուցումն նորա, որ յաճախ երեւում է միջին դարերի վիպասանական սիրոյ մէջ (մանաւանդ Մինենզինգերների, Տրուբադուրների երգերում): Ընդհակառակն Իսլամականութիւնը շատ ստոր է դասում կնոջ: Նա սրբագործում է անյագ ցանկութիւնը, մինչև անգամ երկինքը ներկայացնում է կանանոցի նման և արդէն դրանով նա երևում է սուտ մարգարէի վարդապետութիւն, միեւնոյն ժամանակ նա սրբագործում է անողոք խստասրտութիւն դէպի թշնամիքը:

Քրիստոնէական տեսակէտից բնական ձգտման ամեն տեսակ բաւարարութիւնն արտաքոյ միակնութեան անհրաժեշտ է աստուածադիր կարգի հակառակ և յանցանք համարել: Նոյնը կարելի է ասել և այդ ձգտման հակաբնական բաւարարութեան մասին: Այս վերաբերութեամբ մենք կարող ենք յիշել Ս. առաքելոյ խօսքերը Մի կցորդ լինիք անպտղութեան գործոցն իսաւարի, այլ մանաւանդ յանդիմանեցէք: Զի որ ի ծածուկ ինչ գործի ի նոսա՝ զայն և խօսել անտեղի է» (Յփես. Ե. 11 և 12): Ըստ երևութին կարծես Ս. առաքելալը նայում է ամուսնութեան վերայ ստոր հայեցակէտից, երբ նա իւր առաջին թղթի մէջ առ Կորնթացիս ամուսնութիւնը ներկայացնում է իբրև նախազգուշացնող միջոց կամ իբրև դեղ բղջախոհութեան դէմ, երբ նա խորհուրդ է տալիս ամուսնանալ նրանց, որոնք չունին ընդունակութիւն ժուժկալե-

լու, «զի լաւ է, ասում է նա, ամուսնանալ քան զջեռնուլ» (Ա. Կորնթ. Է. 9): Սակաւ գեղեցիկ գաղափարական կարող է թուել այն հանգամանքն, որ նա պարզապէս խօսում է այնպիսի նիւթերի վերայ, որոնց մասին լաւ կլինի լուել: Բայց նորա խորհուրդը ծագում է մարդկային բնաւորութեանս հիմնաւոր ճանաչողութիւնից, որպիսին է նա իրապէս ներկայումս, սկսած այն ժամանակից երբ մեղքն աշխարհ մտաւ, ծագում է նորա լաւ ծանօթութիւնից մեր բնութեան հետ, որոյ մէջ մարմինն այնպիսի զօրութիւն է դարձած, որ իրան զգալ է տալիս և ճանաչել: Նա ուզում է, որ երբ վերոյիշեալ ձգտումն ուժգինս ներգործում է մարդուս բնութեան վերայ, նորա բաւարարութիւնը սահմանափակուած լինի օրէնքով, իրաւունքով և բարոյական կենսակցութեամբ, որով նա կենթարկուէր բարձրագոյն զօրութեան. նոյն առաքեալն ունի ամուսնութեան վերայ եւ բարձր գաղափարական հայեցակէտն, որովհետեւ առն և կնոջ յարաբերութեան մէջ նա տեսնում է «Ինչպէս» այն է նմանութիւնը ներքին միութեան Քրիստոսի և եկեղեցու մէջ (Եփես. Ե. 32): Բայց եթէ առաջին տեսակէտը շատերին կարող է երևիլ շատ հասարակ և ստոր, երկրորդ տեսակէտը կարող է թուել յոյժ բարձր և չափազանցական: Բայց համեմատութիւնն, որ այս դէպքում Ս. առաքեալն անում է, չպէտք է հասկանալ այնպէս, որպէս թէ ամուսնութիւնն կշարունակուի եւ հանդերձեալ կեանքում յաւիտեան: Որովհետեւ «որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել՝ և յարութեանն որ ի մեռելոց, ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին: Քանզի և ոչ մեռանել ևս կարեն, զի հաւասար հրեշտակաց են և որդիք Աստուծոյ, քանզի յարութեան որդիք են» (Ղուկ. Ի. 35, 36): Մահուան և մարմնաւոր ձգտման բաւարարութեան մէջ ներքին կապ կայ: Թէ առաջինն և թէ երկրորդն իրանց ներկայ ձեռով ու պատկերով միասին աշխարհ մտան մարդու մեղաց մէջ ընկնելից յետ և միասին էլ պէտք է արտաքսուին աշխարհից: Ամուսնութիւնն բացառապէս երկրաւոր յարաբերութիւն է: Բայց նա իբրեւ այդպիսի պէտք է լինի պատկերը բարձր սիրոյ, կրթարան պատրաստութեան Աստուծոյ արքայութեան համար:

ԱՄՈՒՐՈՒԹԻՒՆ. Թէև քրիստոնէութիւնն այնպիսի բարձր նշանակութիւն է տալիս ամուսնութեան, որ տուած պայմաններով ամեն մարդ պարտական է մտնել ամուսնութեան վիճակն, իբրև մի վիճակ, որ որոշուած է այր և կին մարդոց համար, բայց և այնպէս եկեղեցու մէջ ի սկզբանէ մուտ գործեց ճգնաւորական ուղղութիւնն, որ նայում էր անամուսնութեան կամ ամուրուութեան վերայ իբրև մի աւելի բարձր և սուրբ վիճակի վերայ: Թէև շատ վնասակար և կեղծ ինչ էլ մուտ գործեց կեանքի մէջ ի շնորհս այդտեսակ ամուրութեան, բայց պարտ չէ նրան մերժել անպայման կերպով, որովհետև ճգնաւորութիւնն բովանդակում է իւր մէջ խորին ճշմարտութեան տարր: Նա գտնում է իրան հաստատութիւն և նոր կտակարանի մէջ. Հէնց նոյն առաքեալն, որ բարձրացնում է ամուսնութեան սրբութիւնն և մինչև անգամ ասում է, որ ամուսնութիւն արգելողները՝ սուտ և դիւաց վաղդապետութիւն քարոզում են (Առ Տիմ. Դ. 1—3) նոյն առաքեալը ամուրութեան յատկացնում է առանձին սրբութիւն: Նա խորհուրդ է տալիս պահպանել ամուրութիւն «վասն վտանգին», ըստ կարեաց (Առ Կորնթ. Է. 26), այսինքն ի պատճառս այն ժամանակուան ծանր հանգամանաց, որովհետև լինելու էին հալածանքներ Քրիստոսի հաւատացեալների դէմ, երբ ամուրիներն աւելի հեշտութեամբ կարող էին տանել հալածանաց, քան ամուսնացեալներն, որոնք ծանրաբեռնեալ էին ընտանեկան հոգսերով: Նա այնպէս է դատում, որ ամուրի կեանքն արդէն ինքն ըստ ինքեան լաւ է և ամուսնական կեանքից երջանիկ, եթէ միայն ամուրիք ունին շնորհաց այն պարգեւներն, որ շնորհած էին իրան առաքեալին: «Բարւոք է մարդոյ ի կին մարդ չմերձենալ» (Առ. Կորնթ. Է. 1) ասում է Ս. Պողոս Առաքեալը և այս գրուածքի շարայարութիւնը ցոյց է տալիս, որ նորա այս հայեցուածքը կախումն ունի նրանից, որ նա նայում է ամուսնութեան միայն այն կողմի վերայ, որ աչքի առաջ ունի և ճգնաւորութիւնն, ամուրութիւնը գովաբանելիս, այն է ամուսնութեան միայն բնական (մարմնաւոր) կողմը: Ըստ որում թէպէտև ողջախոհութիւնը քրիստոնէական ամուսնութեան մէջ հիմնուած է նորա վերայ, որ բնական ձգտումն հպատակում է բարոյական գաղափարի

իշխանութեան, նորա վերայ, որ հսական ցանկութիւնը թուլանում է և զսպում է շնորհս փոխադարձ զոհաբերութեանց, բայց և այնպէս այն ըոպէից, երբ յանցանքը մուտ գործեց մարդկային բնութեան մէջ, ամուսնական կեանքն ունի այնպիսի կողմ, որ իւրաքանչիւր մարդ ճգնում է, բարոյական զգացմամբ, ծածկել բազմաթիւ ծածկոցներով, և որից նա ամաչում է և որոյ վերայ հէնց Աստուծոյ շնորհքը պէտք է ծածկոց փռէ:

Խնդիրն այն է, որ այստեղ միայն պարզ բնական գործողութիւն չէ կատարուում — ինչպէս կարելի է անուանել այլ բնական երևոյթներն, որոնցից ոչ մի մարդ ազատ մնալ չէ կարող — այլ կատարուում է մարդկային գործողութիւն, որոյ ժամանակ կամքն անհետանում է բնական գործում և կուլ է գնում սորա մէջ: Լեւ այս գլխաւոր կէտն է, որոյ վերայ ճգնաւորութիւնը դարձնում է իւր ուշադրութիւնն, նորա մէջ տեսնելով մեղաւորութեան անխուսելի ըոպէն, հոգւոյ մասնաւոր անհետանալն ստորին բնական կեանքի մէջ, ցրուումն և խանգարումն բարձր կենաց, որ այս դէպքում կարծես մերժուում է և դադարում: Պօղոս առաքեալը պարզապէս հասկացնում է, որ այս գործողութեամբ աղօթով զբաղուող կեանքը խանգարուում է, ուստի նա խորհուրդ է տալիս ամուսիններին առ ժամանակ հեռանալ միմեանցից, որ ազատ ժամանակ ունենան աղօթքի և պահոց համար (Առ Կորնթ. Է. 5): Մինչև անգամ հեթանոսք և այն ոչ միայն արեւելքի, սերական գործողութեան մէջ տեսնում էին զօրութիւն, որ դադարեցնում էր և խանգարում էր վերին հոգեւոր կեանքը, զօրութիւն, որ մարդուն անազատ վիճակի մէջ է դնում: Եթէ մենք դառնանք դէպի հելլենական աշխարհ, մենք կարող ենք մատնացոյց լինել Սոփոկլէսի վերայ, այդ մեծ եղբերգական բանաստեղծի վերայ, որ ծերութեան ժամանակ իրան երջանիկ էր համարում, որովհետև «այժմ միայն նա ազատուել էր այդ բռնութիւնից» (սերական գործողութիւնից): Միւս գլխաւոր կէտն, որոյ վերայ ճգնաւորութիւնը դարձնում է ուշադրութիւն, է մարդու վիճակը հանդերձեալ կեանքում — վիճակ, յորում սրբերը ոչ կին են առնում և ոչ արանց լինում, յորում նոքա հրեշտակաց են նման: Ոչ ոք չի դիմախօսիլ,

որ այս երկնային վիճակը բարձրագոյն է քան երկրաւորն, որ կախումն ունի սերական պայմաններից և կրքերից: Եւ եթէ հնարաւոր լինէր արդէն երկրաւոր կենցաղավարութեան ժամանակ ամենայն կողմանէ կանխապէս գրաւել այս հրեշտականման, իսկ հրեշտակային վիճակն, անհատներն, որոնց այս շնորհած կլինէր, յիշաւի կգրաւէին բարձր և ընտիր աստիճանը կատարելութեան և հէնց այստեղ երկրիս երեսին մօտիկ կլինէին երկնքին և միւսնոյն ժամանակ անբաժան կերպով կծառայէին Տիրոջ:

Այստեղ էլ կայ կէտ, որով կարելի է բաժանել սխալը ճշմարտութիւնից ճգնաւորական տեսակէտի մէջ: Ճշմարիտն այն է, որ կան անհատներ թէ արական և թէ իբական սեռի, բայց առաւելապէս վերջինից, որոնք ունին առանձին շնորհաց պարգև կամ ընդունակութիւն, որ բնական շնորհք է այս բառիս բուն մտքով. կան հրեշտականման բնաւորութիւնք, որոնց մէջ ձգտումն դէպի Աստուծոյ արքայութիւնն այնչափ գերակշռում է երկրաւոր ձգտումներից, որոց սէրն առ Աստուած և կրօնական ձգտումներն այնքան զօրեղ են, որ երկրաւոր կիրքն և սէրն նոցա համար նշանակութիւն և կշիռ չունին, երկրաւոր ցանկութիւնն ու սէրն, որոնք նոքա փորձած էլ չեն, կարծես նոցա համար գոյութիւն չունին: Ելէնչլէնգերի «Աքսէլ և Վալբորն» ողբերգութեան մէջ այս վերջին անձնաւորութիւնն, իւր երկրաւոր սիրոյ թշուառ վիճակի ազդեցութեան ներքոյ, իւր հայեացքը կանգնեցնում է սպիտակ վարդերի վերայ (նշանակ կուսութեան և անմեղութեան), որոնք նրան բաժին են ընկնում փոխարէն ամուսնական պսակի կարմիր վարդերից և յետոյ այսպիսի կարծիք է յայտնում:

«Հանգան արդէն երկրաւոր կարմիր բոցերը,

Փայլում են սպիտակ վարդերի թերթիկները,

Ինչպէս հրեշտակների փայլուն թւերը»:

Ընդհակառակն վերոյիշեալ անհատները (կուսակրօններն), որոնք ամուրի կեանք են վարում, ի սկզբանէ գտանուում են այն կէտի վերայ, որին Վալբորնը հասաւ միայն դառն փորձից և վշտալի անձնուրացութիւնից յետ: Նոքա սկսում են սպիտակ վարդերով, որոնք յիշեցնում են հրեշտակաց թւերը, նոցա համար երկրա-

ւոր սիրոյ նշանակ կարմիր վարդը երբէք գոյութիւն ունեցած չէ
 և չի էլ ունենալ: Նոքա անհրաժեշտութիւն են զգում բացառա-
 պէս ապրել համաձայնութեամբ Աստուծոյ հետ, խորհրդաբար հա-
 ղորդակցելով նորա հետ և սիրոյ անձնուրաց գործեր կատարելով
 Աստուծոյ արքայութեան համար և այս մտքով նոքա նախապէս
 հասնում են երկնային վիճակին: Այս կանխահասութեան համար
 մենք կարող ենք նրանց վերաբերել — յատկացնել բարձրագոյն կա-
 տարելութիւնը. բայց հէնց և այս հիման վերայ նոցա կեանքի մէջ
 պէտք է խոստովանենք և ճանաչենք եւ որոշ սահմանափակութիւն
 և միակողմանիութիւն: Եւ այդ հէնց այն պատճառով, որ նոքա նա-
 խապէս հասնում են երկնային վիճակին, նոքա ձեռնհաս չեն լինում
 անցնելու երկրաւոր կեանքը, չեն ճանաչում ամուսնութեան և ըն-
 տանեկան կեանքի ուրախութիւնն և այն մեծ հարստութիւնն,
 որ այդ կեանքը բովանդակում է իւր մէջ, չեն ճանաչում նորա
 պարտականութիւնքն ու տանջանքներն, իսկ այս ամենն անհրաժեշտ
 սեպհականութիւնք են կատարեալ երկրաւոր գոյութեան, որից երկ-
 նաւոր գոյութիւնն այն ժամանակ միայն կհրաժարուի, երբ կհասնի
 նորա ժամանակը. Բայց երկնաւոր վիճակի այսպիսի նախագրա-
 ւումն, որոյ առաջ մենք կարողանայինք խոնարհել և ճանաչել նորա
 նշանակութիւնն ու արժանիքը, յիշաւի պէտք է Աստուծմէ շնորհած
 լինի և որոշ անհատների բնութեան մէջ հաստատուած, և այսպիսի
 անհատները ամբողջ մարդկային սեռի մէջ պէտք է միշտ լինեն Զա-
 րեմա-Լիւն: Ճգնաւորական ամուրիութեան սխալ կողմն հէնց այն
 է, որ նա երբէմն կարծում է, թէ երկնաւոր վիճակի նախագրա-
 ւումն հնարաւոր է կրթութեամբ և թէ մարդս կարող է հրեշտա-
 կային բնութիւն ձեռք բերել, արտաքսելով իւր միջից հին Ադամին:
 Այստեղից է առաջ գալիս և քաթոլիկ եկեղեցու եկեղեցական ան-
 բնական ստիպողական ամուրութիւնը *):

*) Այստեղ մենք պէտք է բացատրենք, որ յարգելի հեղինակի հայեացքն
 այս դէպքում մի փոքր միակողմանի է: Ինչպէս երևում է, նա կարծում
 է թէ ճգնաւորական ամուրութիւնը բացառապէս հետեանք է բնական
 շնորհաց պտղեաների, բայց չէ կարելի ժխտել և այն, որ մարդս անար-

Որովհետեւ մեծ բազմութիւն քահանաների և կուսակրօնների չէ պատմում հրեշտականման բնութիւն ունեցող անձնաւորութիւնք, թէեւ յայտնի բան է կան նոցա մէջ և շատ յարգանաց արժանի անձնաւորութիւնք և այնպիսիք, որոնք բարեխղճութեամբ կատարում են իրանց կուսութեան ուխտը: Ամուրութիւնն, որ հարկ է պահպանել անընդհատ պատերազմով անհանգիստ զրգումանց և ձգտումների դէմ, անընդհատ լարուած վիճակով ախտաւոր երեակայական ցնորքներին յաղթելու համար — այսպիսի ամուրութիւնը կարծեմ բարձր չէ քան կանոնաւոր ամուսնական կեանքը: Այսպիսի ամուրութեամբ հաստատուում են Ս. Գրոց խօսերը թէ «լաւ չէ մարդուն միայնակ լինիլ»: Բողոքականութեան անուրանալի ծառայութիւններից մէկն արեւմտեան եւրոպայի համար այն է, որ ջնջեց ստիպողական կուսակրօնութիւնն և սրբագործեց ամուսնութիւնն իւր հետեւողների խղճի առաջ, թէեւ նա պսակը չէ ճանաչում խորհուրդ, որպէս ճանաչում է հոռովմէական քաթոլիկ եկեղեցին (նոյնպէս և Հայաստանեայց Ս. եկեղեցին):

Գեւ կերպով Աստուծոյ ծառայել կարողանալու համար նոյնպէս և մարդկութեան բարեաց, կարող է և պէտք է կրթութեամբ պահեցողութեան և չափաւորութեան մէջ զսպել իւր երկրաւոր կրքերն ու ցանկութիւնը և որոշեալ չափով հասնի ազատութեան այդ կրքերի և ցանկութեանց ազդեցութիւնից, ուրեմն և ստանայ կուսութեան ընդունակութիւն: Ազնւեան կոյս - ճգնաւորների, որոնք շնորհիւ կրթութեան պահեցողութեան և չափաւորութեան մէջ հասած են հնարաւորութեան պահպանելու իրանց կուսութիւնն ընդ միշտ: Եթէ ճգնաւորական կուսական կեանքը լինէր միայն բնական շնորհաց և ընդունակութեան պտուղ և չառաջանար կամաւոր որոշումներից, մարդուս ազատ կամքից, չէր կարելի այն բարոյական արժանաւորութիւն համարել և սխրագործութիւն: Իսկ ինչ վերաբերում է կաթոլիկ եկեղեցու մէջ ընդունուած եկեղեցական դասի ստիպողական ամուրութեան, — դա ծագում է նրանից, որ այնտեղ բուռն արտաքին ուժով կապել են միմեանց հետ երկու առարկայք, որոնք բնաւ միմեանց հետ էական կապ չունին, այն է ամուրութիւնն ու քահանայութիւնն: Ամուսնութիւնն և ընտանեկան կեանքն ամենեին արգելք չեն կարող լինել քահանայական պաշտօնը սրբութեամբ կատարելու համար:

Քրիստոսի ամուրութիւնը բոլորովին առանձին էրեւոյթ է և պէտք է գննուի առանձին տեսակէտից. նորան չէ կարելի համեմատել վերոյիշեալ հրեշտականման բնութեանց հետ էլ, որոնք այնուամենայնիւ շատ կողմանէ ենթարկուած են մեղաց. նա իբրեւ Փրկիչ աշխարհի, իբրեւ Որդի Աստուծոյ և նոր Ադամ ամենեւին անհամեմատելի է որեւէ մարդկային անհատականութեան հետ: Նորա հարսը կարող է լինել ժողովն հաւատացելոց (եկեղեցին): Նա նախահայր է նոր մարդկութեան և նորա յայտնութիւնը հակապատկերն է այն վիճակին, որոյ մէջ ծնանում են այն մանուկներն, որոնք պէտք է շարունակեն հին, մեղքի ենթարկուած, կեանքը: Ընդ հակառակն նա եկաւ, որ հին Ադամի սերնդի մէջ ներմուծէ բոլորովին նոր եղանակ ծննդեան, այն է վերածնումն և կամ կրկին ծնունդ: Քրիստոսին վերաբերելի են մարգարէական յայտնի խօսքերը «Ահա ես եմ և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած», (Եբր. Բ. 13): Այս մանկունքն են նոքա, որոնց նա իշխանութիւն տուեց Աստուծոյ որդիք կոչուելու, «ոյք ոչ յարենէ և ոչ ի կամաց մարմնոյ, և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան (Յով. Ա. 13): Քրիստոսի ամուսնական կենցաղավարութեան հնարաւորութեան մասին գաղափարն անգամ սրբապղծութիւն է և հաւասար նորա հրաշալի ծրնրդեան ի Ս. Կուսէն չհաւատալուն:

Կամաւորապէս ընտրած ամուրութիւնը դատապարտելի է. ուստի և անբարոյականապէս են վարվում նոքա, որոնք յարմարութեան համար և կամ այնպէս անուանեալ իրանց ինքնուրոյնութիւնը կամ անկախութիւնը պահպանելու համար չեն կամենում ամուսնանալ: Ըստ պաշտաման և ըստ համոզման ընտրած ամուրութիւնը պէտք է հիմնուած լինի կամ անհատական յատկութեանց և կամ առանձին հանգամանաց վերայ: Վերը մենք յիշեցինք հրեշտականման բնութիւնքն, որոց անհատական բնական առանձնայատկութիւնք նոցա խզի համար պէտք է լինին միւսնոյն ժամանակ աղբիւր և բարոյական պարտականութեանց, սոյնը վերաբերում է և այնպիսի անձանց, որոնք թէև չունին վերոյիշեալ բուռն ձգտումն դէպի երկնայինը, բայց նոցա զգայական ձգտումն բոլորովին խուլ է և մեռեալ և որոնք այս պատճառով պարտական են չա-

մուսնանայ: (ևն ներքինիք, որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս: Մատթ. Թ. 12): Մի քանի Հանգամանքներում կարելի է ընտրել ամուրութիւն Աստուծոյ արքայութեան Համար, որովհետեւ այն առանձին գործունէութիւնն, առ որ կոչուում է ոմն Քրիստոսի գործի Համար, զոր օրինակ առաքելական կամ քարոզչական գործունէութիւնը, կարող է ամուսնութեան մեջ խոչընդոտ գտնել իւր մեծ և բազմակողմանի զարգացման Համար: Բայց և այնպէս շատ եկեղեցական յեղատիոսիւների օրինակները ցոյց տուին, որ այդ գործունէութիւնն կարող է ամուսնացած կեանք վարողն էլ կատարել և իւր Հօտին օրինակ լինել:

Շատ անհատներ պէտք է ամուրի մնան, թէև այդ վիճակն իրանց ցանկութեամբն ընտրած չեն, բայց Հանգամանքներից ստիպուած են առ այն: Այսպիսի անձանց Համար պարտաւորական է անձնուրացութեամբ տանել զրկանաց, որին դատապարտուած են: Այս վերաբերում է նրանց, որոնք չգտան փոխադարձ սէր նոցանից, որոց մէջ որոնում էին, նոյնպէս ընդհանրապէս նրանց, որոնք չկարացին գտնել անձնաւորութիւնք, որոց Հետ կապել կարողանային իրանց կեանքը:

Այսպիսի ամուրութիւն, որոյ պատճառը փոխադարձ սիրոյ բացակայութիւնն է, առաւել պատահում է կանանց սեռի, քան արականի մէջ. որովհետև սովորութիւն չէ կանանց այր որոնելն իսկ այր մարդը պէտք է որոնէ կին:

Ամուրութեան միւս ստիպողական պատճառն այն է, որ կան շատ այր մարդիկ, որոնք չունեն բաւական նիւթական միջոց ամուսնական կեանքի Համար. այս Հանգամանքն էլ մէկն է այն առիթներից, որոնք բազմացնում են ամուրի կանանց թիւը: Ամուրութեան այս տեսակն, որ առաջ է գալիս կեանքի Համար կարեւոր միջոցների պակասութիւնից և որ մեր ներկայ ժամանակումս չափազանցութեան է Հասած և առիթ է տալիս ամենատեսակ անբարոյական երեւոյթների, կազմում է մեր Հասարակական պայմանների տխուր և խառար կողմերից մէկը: Այս պայմանների ազդեցութեամբ և շնորհիւ, որոնցից առաջ է գալիս այնքան անձանց ամուրութիւնը, մի և նոյն ժամանակ բազմանում է զոյութեան միջոցներից

զուրկ գերդաստանների և մանկանց թիւը, որոնց պահպանութեան և դաստիարակութեան համար չկայ հնար, հէնց այս պայմաններից է առաջ գալիս եւ աղքատ սինլքոր դասը ժողովրդեան, իւր բոլոր թշուառութիւններով: Այստեղ մենք հանդիպում ենք մեր ժամանակի ընկերվարական խնդրին: Այս խնդրի վերաբերութեամբ այստեղ ընդհանրապէս կարելի է ասել միայն այն, որ նորա լուծումն կարելի է գտնել միայն այն ժամանակ, երբ բարեփոխութեամբ հասարակական յարաբերութեանց մասնաւոր անհատներին կտրուի հնարաւորութիւն բարոյական ընտանեկան կենցաղավարութեան, որ աներեւակայելի է առանց գոյութեան համար անհրաժեշտ միջոցների — երբ կտրուի, ասում ենք, հնարաւորութիւն այդ կեանքի աւելի ընդարձակ ձեւով, քան որպիսին կայ այժմ ներկայ հասարակական պայմանների մէջ:

(Կը շարունակուի):

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ Մեծ. Պ. Առաքել Մատուրեանից բաժանորդագին տաճն օրինակ Արարատի ներկայ թուի, որոց չորս օրինակը նուիրում է հետեւեալ տեղերին ըստ ցանկութեան իւրում. մի օրին. Գրասենեկի ընկերութեան իւրոյ. մի օրին. վանից Տաթևու. մի օրինակ եկեղ. ծխակ. ուսում. Հայոց Գեօրիսու. և մի օրինակ եկեղ. ծխակ. ուսում. Հայոց ի Փոնակոթ:

Իսկ միւս հինգ օրինակը թողել է բարեհայեցողութեան Խմբագրութեան, որ և ուղարկում ենք հետեւեալ տեղերը. Մի օրինակ Հայ Ուսանողաց ի Խարկով. մի օրինակ Հայ Ուսանողաց ի Ղազան. մի օրինակ Հայ Ուսանողաց ի Փարիզ. մի օրինակ Սանտիստեան Օրիորդաց ուսում. ի Վան և մի օրինակ Սօչայի Հայ գաղթականներին: